Մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Արարատ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի երաժշտության (11 դասաժամ), ՆԶՊ (10 դասաժամ), իմ հայրենիք (6 դասաժամ), ֆիզկուլտուրայի (14 դասաժամ), ինֆորմատիկայի (11 դասաժամ)

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

2.Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի որակավորման վերաբերյալ:

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն (Ձև 4),

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6.Մեկ լուսանկար 3x4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 3-ից մինչև 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումն կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 23-ին, ժամը՝ 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի, Արարատ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Արարատ Իսակովի 2:
Տեղեկությունների համար զանգահարել 033-00-27-21 հեռախոսահամարով: